№ 27 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍ 29 — 1895 — ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍ 29 № 27

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՁԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրամ, կէս տարուանը 6 դրամ։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի

Արտասահմանից փոխի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՁԱՒԻՂ

«ՁԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՁԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չի 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդի հետ թէ կղերի.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից։ Նամակ Դավրէժից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ կովկասից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Քեազազ գաւառը։

ԺՈՂՈՎՐԴԻ՞ ՀԵՏ ԹԷ ԿՂԵՐԻ

«Մենք ժողովրդի հետ, դուք կղերի հետ»—ասում է «Մշակը» երկար ժամանակից յետոյ համարձակւելով վերջապէս արդարացի մի գայրոյթով դիմել դէպի հայ կղերի անհանդուրժելի խայտառակ գործունէութիւնը և այդպիսի գործունէութեան ապօրինի այն բոլոր սողուններին, որոնք իրենց լրագիրներով հանդերձ կերակրվում են կղերականների սեղաններից թափվող փշրանքներով։

Յօդուածը, ամբողջապէս վերցրած, հասկանալի է և համակրելի, բայց նրա յենակէտն ու նշանաբանը սխալ է և անտրամաբանական։

«Մենք ժողովրդի հետ, դուք կղերի հետ։ Մենք կղերի դէմ, դուք ժողովրդի դէմ.—ահա մեր և ձեր նշանաբանը»—ասում է նա, խօսքը ուղղելով ամբոխի գծուծ, ցեխային ինստինկտները շոյող և ուռճացնող մամուլին, Էջմիածնի և նրանից վիժող կրօնաւորութեան շուրջը պար բռնած բոլոր տիրացուական խմբերին։

Բայց հարց է այժմ թէ այն ժողովուրդը, որին ակնարկում է յօդուածագիրը—այո՞ ժողովուրդը, որի հետ է. այդ յօդուածի և նրա համակրողների թէ ընդհակառակն կղերի և նրա գործունէութեանը հետևողների։

Չէ՞ որ ժողովրդի ամենամեծ մասը, դարերից ի վեր իրը դաստիարակ ունենալով կղերականութիւնը, իրը դաս՝ նրա շահերն ու հասկացողութիւնները, իրը բարոյականութիւն՝ նրա քարոզած անմտութիւնները... մնացել է կղերական օղի սարկութեան մէջ կերակրել և սնուցել է նրան, բազմացրել և զօրեղացրել նրա գոյութիւնը և ահա հազիւ մի քանի տասնեակ տարիներ է, որ սկսել է հասկանալ կղերի պարազիտային յատկութիւնը և հետզհետէ ազատելու ջանքեր անել։ Բայց դեռ մեծամասնութիւնը, ժողովուրդը կղերի կողմն է, նրան լարգող, նրա շահերը իրը սրբութիւններ, իրը Աստուածային պատուէրներ ընդունող... և նրա դէմ մարտնչողներին, կղերական ոգու դէմ թեթև խօսողներին անդամ հալածում է, գանազան ածականներով մկրտում, նրան քարկոծում է իսկ... փաստեր պէտք են։ Քսան տարի է եր «Մշակը»—այսինքն Գրիգոր Արծրունին և նրա խումբը կռիւ մղեցին կղերական ոգու դէմ, քսան տարի է որ այդ կռիւը յուզում է ժողովրդին, որպէս ճահիճի մէջ հոսող պարզ ջրի վտակը կարող է անել—բայց դեռ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը ոչ թէ Գրիգոր Արծրունու և նրա քարոզած, ոչ թէ գիտութեան և քաղաքակրթութեան յայտնագործած ճշմարտութիւնների հետ է այլ կղերի և նրա շահերի հետ։

Դա իր պատճառներն ունի. քաղաքական հանգամանքներ էլ այժ են տալիս այդ դասակարգի ոտնձգութիւններին, բայց փաստը այն է, որ ժողովրդի մեծամասնութիւնը ոչ թէ մեզ հետ է, այլ կղերի հետ։ Եւ եթէ մենք կամենանք ժողովրդի հետ լինել, հարկաւոր էր մեզ կղերի հետ լինել, որ ոչ միայն կը լինէր պահպանողական—կրօնական թերթերի պէս անել, այլ ուղղակի ցեխի մէջ թաւալեցնել մեր բռնած դրօշը որի նպատակն է ճշմարտութիւնը միայն քարոզել, ճշմարտութիւնը գիտութեամբ, յառաջադիմութիւնը գիտութեամբ և գիտութիւնն էլ ազատ ամէն տեսակ կաշկանդող կապերից...

Մեր նշանաբանը դա պիտի լինի, թէկուզ ամբոխը մեզ հետ չը լինի առ այժմ։ Ամբոխին պիտի հասկացնել մեր նշանաբանը, մեր դրօշի տակ պիտի կոչել նրանց և դեռ չը յենւել այն տեսակէտի վրայ, որ ժողովրդի ձայնը—ճշմարտութեան ձայնն է։ Ոչ. յենւել ամբոխի կարծիքների, հասարակական կոչւող անմիտ կարծիքների վրայ, ընդունել նրա բարոյականութիւնը—դա նշանակում է ոչ մի քայլ չ'անել. մանաւանդ մեր, հայ ժողովրդի մէջ, այդ ժողովրդի շատ հասարակութիւնների մէջ, ուր սխոլաստիկական—կրօնական ոգին կաշկանդել է ամէն ինչ, ճզմել ամէն ուղեղ և որին ուսուցանողներն ու ղեկավարողները կղերականներն են դեռ ևս։

Մեր նշանաբանը առ այժմ պիտի զատւի ժողովրդի նշանաբանից. միշտ էլ զատւած պիտի մնայ, եթէ ժողովուրդը շարունակէ կոշտացած մնալ իր աւանդական սխալ և կղերի ջանքերով արմատացած՝ բարոյականութեան մէջ։ Մեր բռնած դրօշը բարձր պիտի մնայ ամբոխի ոչխարային կարծիքների ազդեցութիւնից, թէկուզ այդ դրօշի վրայ ցեխ շպրտէր և նրան բռնողներն ու պաշտպանողները հալածւէին, տանջւէին։

Յառաջադիմութիւնը ճշմարիտ գիտութեամբ, թէկուզ ամբողջ ժողովուրդն էլ դէմ լինէր—ահա մեր նշանաբանը։

Եւ այդպէս, առ այժմ ամէն ինչ ցոյց է տալիս. որ մենք ոչ ժողովրդի հետ կարող ենք լինել և ոչ էլ կղերի, որովհետև վերջինս դեռ իր ճանկերի մէջ ունի առաջինին. ժողովրդի հետ լինել այժմ—նշանակում է կղերի հետ լինել, եթէ մարդ չէ կամենում հակասութիւն գործել։

Ոչ կղերի և ոչ էլ նրան պաշտպան՝ ամբոխի հետ, ճշմարտութեան և գիտութեան հետ միմիայն...

Վ. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

16 յուլիս 95

Մեր Դավրէժու երիտասարդների մեռելային անշարժութիւնը, անտարբերութիւնը դէպի ազգային—գաղափարական խնդիրները հասել է իւր բարոյական խանգարման գագաթնակէտին։

Այնպէս որ դուք չէք գտնել գոնէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԵԱԶԱԶ ԳԱՒԱՌԸ

—

Սուլթանաբադից դէպի հարաւ հինգ փարսախ հեռաւորութեան վրայ գտնվում է Քեազազ գաւառը։ Դա մի ընդարձակ նահանգ է, որի վրայ ընկել են մօտաւորապէս 60—70 գիւղեր, որոնցից 7—8-ը միայն հայաբնակ են,

Մայիսի վերջերումն է, մի ուղեցոյցով մենք հասանք, Քեալավա անուանեալ գիւղը, որը բաղկանում է 150 տուներից։ Երեք քահանայ ունի այդ գիւղը, որոնք աններելի սխակալութեամբ են վարվում միմիանց դէմ, երեքի հետ էլ առանձին առանձին տեսնուեցանք և պատճառը այն է դուրս գալիս, որ տէր հայրերը, գիւղացիներին կուսակցութիւնների բաժանելով, առիթից օգուտ քաղելու բարի նպատակն ունին...։

Ուսումնարան չ'ունի այդ գիւղը, մինչդեռ գիւղացիների տնտեսական վիճակը դոհացուցիչ լինելով կարող էին մի օրինաւոր ուսումնարան ունենալ։ Այդ մասին էլ մենք բաւականին հետաքրքիր եղանք, բանից դուրս եկաւ, որ տէր հայրերը միմիանց չինածը քանդում և ուսումնարանը գիւղական մանուկի համար անպէտք, միևնոյն ժամանակ վնասակար են հրատարակում..։

Օրը կիրակի լինելով, մենք առիթ ունեցանք յիշեալ գիւղի ազդեցիկ անդամներից շատերի հետ տեսնուել, որոնցից իւրաքանչիւրը բռնած լինելով մի բարի....տէր հօր կողմը աշխատում են հակառակ կողմն ընկճել, ինչպէս օրինակ մի քահանայ գնում է գիւղի նախկի մօտ և սկսում է միւսի դէմ մատնութիւններ և բամբասանքներ անել. այդպիսով ժողովուրդը զգուվում և մէջտեղում օգտւում է թուրք նայիպը...։

Երկու օր յիշեալ գիւղում մնալուց յետոյ տիուր տպաւորութեան տակ հեռացանք մենք այդտեղից։

Քեալավա գիւղից դէպի հարաւային արևելք մի մղոն հեռաւորութեան վրայ գտնւում է մի ալ հայաբնակ գիւղ նա ևս բաղկացած լինելով 150 տուներից Ազնա է կոչվում։ Այդ գիւղը Քեալավա գիւղից հարուստ է իւր բերքերով և այգիներով. այդտեղ գտնվում են նաև երեք քահանաներ, որոնցից մէկն է Քեազազ գաւառի առաջնորդական գործակալը։ Այդտեղ էլ տիրում է Բաբելոնեան խայտառակութիւն, որի պատճառն է հասի հշհասի խնդիրը։ Տէր Ենովք անունով մի քահանայ ցանկանում է իւր երկու թոռները միմիանց հետ պսակել (տղան 8 տ. իսկ աղջիկը տասն և մէկ տարեկան) իսկ դրան արգելք է լինում առաջնորդական գործակալը։ Այդ կերպիւ դիտպական հասարակութիւնը յիմարաբար բաժանուած լինելով երկու կուսակցութիւնների, միշտ աշխատում են միմիանց վնասել ի հարկէ մէջտեղ նիւթապէս։

Զատ ցաւալի, միևնոյն ժամանակ սարսափելի է այս գիւղացիների ամուսնական սովորութիւնները, երեւակայեցէք 10 տարեկան երեխայի 15 տարեկան աղջկայ և կամ 8 տարեկան աղջիկը 12 տարեկան երեխայի հետ պսակելը, այդ կերպիւ հակառակ գիւղի մաքուր օդին և առողջարար ջրին վարժուած երիտասարդը 25 տարին չը հասած դեռ ֆիզիքապէս թուլանում, բոլորովին թառամում և լինում է մելամաղձոտ, կինը զաւակ չի ծնում նոյնպէս և նաև ֆիզիքապէս փչացած է. որանից առաջ է գալիս գիւղացիների մէջ շատ ցաւալի դէպքեր...։ Օրինակ սրանից մի քանի տարիներ առաջ, 18 տարեկան մի օրիորդի պսակում են 9 տարեկան մի երեխայի հետ. այդ կերպիւ դժբաղդացած երեխայի անբաղդ ամուսինը ստիպւած է լինում սպասել 7—8 տարիներ դեռ։ Բայց նա յուսահատած իւր չար բաղդի վրայ գնում է մի այլ թրքաբնակ գիւղ և ընդունելով մահմեդական կրօնը պսակվում է մի ծերացած պարսկի հետ, իսկ երեխան երբ հասնում է 14—15 տարեկան հասակին, զղալով իրան պատահած դժբաղդութիւնը բարակացաւով մեռնում է. ընտանիքների մէջ պատահած դոյնպիսի դժբաղդութիւնները շատ շատ են։

Մարդ երբ տեսնում է այդ տեսակ զազա-

տասը հատ երիտասարդ որոնք, երբեմն իրանց պարապ ժամերը նուիրեն այս ինչ կամ այն ինչ օրուայ կարևոր այրող հարցի շօշափման, արծարծման համար. բայց միայն այս կողմ այն կողմ թափառելու բարոյական—գիտականտրամաբանութեան շրջանից դուրս մտածողութիւններով շրջապատելու քաղցր սկզբունքով տոգորուած, միատեսակ անց են կացնում իրանց կեանքի թանկագին ժամերը, ժամեր որոնցից իւրաքանչիւրը կարելի է գործադրել հանրամարդկային բարոյական և գաղափարական յառաջադիմութեան համար. տեսնել այս բոլորը և լռել միայն կարող են լոգիկայից զուրկ և խաւարամտութեան հետ համաձայնուող, ստոր մարդիկ:

Դժբաղդաբար կան մարդիկ՝ որոնք գործում, խօսում են առանց լոգիկայի առանց տրամաբանութեան. հոգ չէ:

Դժբաղդաբար կրկին ստիպուած ենք գծելու մեր երիտասարդների գաղափարական, բարոյական վիճակը, նորանց ստոր դրութիւնը. երևակայեցէք սիրելի ընթերցողներ, իրանց փքուն կերպով ինտելիգէնտ կոչող երիտասարդները (որոնք իսկապէս լաւ կերպով չեն ըմբռնել ինտելիգէնտ բառի նշանակութիւնը) որոնք մի մեանց աջից «հաւաքում են մի քանի հատ իրանց նման ինտելիգէնտ (?) երիտասարդներ և կազմում ընկերութիւններ կամ աւելի լաւ ասած խմբակներ, որոնք դիմակաւորուած «բարեսիրական», «հայրենասիրական» և այլն փքուն էպիտիտներով, որոնք ըստ եւրոպական ամենանուրը բայց և երբեմն կոպիտ քաղաքականութեան սկսում են անինայ հարուածել հակառակ այդ ընկերութեան կամ այն անհատին, որը համարձակութիւն կունենայ ընկերութեան ճշմարտութեամբ կեղեւաւորուած խոշոր կեղտերը երևան հանելու հասարակութեան աչքին և վայ նորան. այդպիսի մէկը պէտք է որ թողնէ Դավրէժն ու փախչի...:

Իբրև փաստ յադաջ բերեմ տեղոյս աննշան «բարեսիրաց» ընկերութեան վարչութեան անդամներից մէկի երկտողը «ով որ կըհամարձակի մեր ընկերութեան համար լրագրում գրելու նորա գլուխը կըջարդենք» և այլն այսպիսի երազներ և թայֆայականներին յատուկ երևայական տուր ու դմփոցների ձայն էր որ լսում էր յիշեալ պարոնը. ահա ձեզ ինտելիգէնտ (?!!) կոչուած երիտասարդի տրամաբանօրէն ասուած խօսքերը: Իսկապէս տխուր իրականութիւն է մեզ համար որ ներկայ 19-երրորդ դարու մէջ դեռ ևս գոյութիւն ունի Հնադարեան կոպիտ, թշնամական ոգին, որը պատճառ եղաւ հանրամարդկային բարոյական աւերման:

Տեղոյս երիտասարդների անտարբերութիւնը դէպի լուսաւորութիւնը, դէպ՝ յառաջադիմութիւնը դէպ՝ մամուլը իրօք զզուելի է. լուսաւորութիւն յառաջադիմութիւն չեն սիրում, որովհետև դոքա վնասակար են միայն նորանց շահերին, իսկ, մամուլին՝ որովհետև նրանց կեղտերն է երևան հանում և մտրակում է որպէսզի արթնանան. իսկ կուսակցութիւնից «զահլաներն» է գնում, որովհետև կուսակցութեան բարոյական նշանակութիւնը հասկանալու ընդունակութիւնից զուրկ են, նրանք չեն հասկացել որ ճշմարիտ կուսակցութիւնն է մարդկութեան դէպի յառաջադիմութիւն մղողը. նորանք չեն ուզում ձրգտել դէպի ինչ որ ազնիւ է ինչ որ բարի, բայց գիտեն միայն մեծամանց հետ տմարդի կերպով վարուել մի ընդհանուր թշնամական ատելութեամբ. ահա թէ որչափ սահմանափակ է Դավրէժու երիտասարդութեան մեծամասնութեան մտքի և տրամաբանութեան հորիզոնը, որը պարփակուած է շնորհիւ խաւարամիտ, միջնադարեան գաղափարների պրոպագանդայի. բայց և խաւարամտութեան դարն էլ անցաւ, այժմ 19-երրորդ դարն է, դար մարդկութեան յառաջադիմութեան և լուսաւորութեան:

Խնդրում ենք յարգելի խմբագրութեանդ, որ «Շաւղի» միջոցաւ զանց չառնի երբեմն մտրակել տեղոյս բարոյականի և գաղափարականի կողմից վնասուած երիտասարդութեան:

Յովել Տէր Մովսէսեանց.

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

15 յուլիս 95

Լինելով ահա մօտ երկու ամիս Դավրէժում, ես շատ փոքր գաղափար ունէի այստեղի հայ հասարակութեան վերայ, բայց կարդալով «Շաւիղի» մէջ զետեղուած զոնազան յօդուածներ և նամակներ Դավրէժից, այժմս փոքր ի շատէ կարող եմ նկարագրել այդ հասարակութեան ներկայացուցիչների պատկերը, որը կարծեմ շատ էլ դուրեկան չի լինել: Վերցնենք օրինակի համար Արամեան դպրոցի հոգաբարձուներին, որոնք եթէ ոչ թէ լիրվին բայց գոնէ փոքր ի շատէ պէտք է լինեն իրենց ընտրուած ժողովուրդի ձգտումների և հայացքների ներկայացուցիչներ, բայց սխալ կը լինէր այդպէս ենթադրելը: Ահա փաստ. կարդալով «Շաւիղի» № 23-ի մէջ զետեղուած «Ատրպատականի առաջնորդութիւնը» վերնագրով յօդուածը ես համոզուած էի, որ վերոյիշեալ «քաղաքական հոգաբարձուները», որոնք ժողովուրդի ներկայացուցիչների մի մասն են կազմում, պէտք է նոյնպէս չը ցանկանան վերստին տեսնել Դավրէժում Սուքիաս եպիսկոպոսին և առհասարակ պէտք է հակառակ լինեն դէպի նա, բայց ո՞րին էք տեսնում որ այդպէս լինի: Այդ պարոնները դեռ խընջոյքի մէջ կենաց էլ են խմում և հեռաւոր Սուքիասին մաղթում երկար կեանք և գործունէութիւն. ես ականատես էի. կարելի է որ այդ աղա հոգաբարձուները, որոնցից մի քանիսը բերանացի, իմ նոցա հետ ունեցած խօսակցութեան մէջ, յայտնում էին իրանց զգուանքը դէպի Սուքիասը, իրանց սրտի մէջ չեն էլ ուզում Սուքիասին, բայց ինչու համար նոքա նորա կենացն են խմում. այդ ինչ երկերեսանութիւն է: Անշուշտ այդպիսի մի երևոյթ արժանի է այդ հոգաբարձուների բարոյական սնանկութեան. շողոքորթութիւն, ստրկացած ոգի և երկերեսանութիւն—ահա դոցա բարոյական պատկերի ատրիբուտները. բայց այդ պարոնների մէջ կան և այնպիսի անձնաւորութիւններ, որոնք համարձակ են և փայլում են իրանց տգիտութեամբ. դոքա եւրոպական ցիվիլիզացիայի արտաքին ձևերի հեծևողներն են, որոնցից մէկը պըտրտած լինելով ամբողջ Եւրոպան, նոյնիսկ իրանպահել էը գիտէ Դավրէժի հասարակութեան մէջ: Այդ պարոնը հոգաբարձութեան անդամ է և թէ ինչքան օգուտ պէտք է տայ իւր ժողովուրդին, որը նորան ընտրել է, կարելի է եզրակացնել այն խօսքերից, որը նա արհամարհանքով ասում էր ինձ «այստեղի հայերը բոլորն էլ բարբարոս են»: Մխիթարացուցիչն այն է որ այդ պարոնների մէջ կան մի երկու երեք ազնիւ հոգիներ:

Ուսանող Խարկովի համալսարանի

Ա. Առաքելեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի ամսոյս 25-ին երեկոյեան ժամը 5-ին, մէկ տարօրինակ դէպք պատահեց թնդանօթների հրապարակում (Թուփխանէյում), որը և արիւնով վերջացաւ, Ալա-էլ-Դօլվլէի փողոցում, ճիշդ «Շաւղի» խմբագրութեան առաջ: Մանրամասնութիւնը հետևեալն է: Ֆրանսիացոց Շարժէ-դաֆֆէրը, գազի գործարանի դիրեկտեօրը և ակնաբոյժ դեօկտէօր Ռաթուլ կառքով հրապարակից անցնելիս, միրգ ծախող թնդանօթաձիգ մէկ զինուոր սկսում է քարեր արձակել մէկ շան վրայ, որը պատկանում էր եւրոպացիներին և հետևում կառքին: Կառքը կանգնեցնում և եւրոպացիք միջից դուրս գալով սկսում են խարազանով հարուածել զինուորին. ինչ որ է զինուորը փախչում է և (որպէս պատմում են) սկսում են թակելով հալածել նրան մինչև մէկ որոշ տեղ հրապարակում և ապա վերադառնում կառքի մօտ ցնցացակոծել ուզելով զինուորի տունը, որի միջոցին հաւաքւում են շատ թուով թնդանօթաձիգ զօրքեր և փայտերով յարձակւում երեք եւրոպացիների վրայ, մէկ փայտի հարուած սկզբում վիրաւորում է ակնաբոյժի գլուխը, խիստ արիւն հոսեցնելով, որը

նութիւնները սարսափում է, այստեղի գործակալը լինելով մի բաւականի արթուն մարդ՝ այդ տեսակ կեղտոտութիւնների առաջն առնելու համար քանիցս դիմումներ է արել, Նոր-Ջուղայի առաջնորդական խորհրդարանին, որը բաղկացած է երեք չորս գնման—գօլմաններից, թէ՝ ինչ են պատասխանում այդ մարդկութեան ոսոխները. ահա «իրաւունք չունիք այդ բաները մեզ գրելու. շուտ Վանքի եկամուտները (նուէրները) ժողովիր ուղարկիր և այլն»: Այդ կէտերի վրայ հրաւիրում ենք առաջնորդական տեղապահի ուշադրութիւնը...:

Գալով ուսումնարանին. այդ գիւղում գտնվում է մի ուսուցիչ, որը մի տարիից աւելի է աշխատել անձնուիրաբար հիմնելու ուսումնարանը և այդ առթիւ առանց վարձատրութեան, տանելով ամեն զրկանք և յարմարելով գիւղական ամենախիստ կեանքին աշխատում է առաջ տանել գործը, իսկ ուսուցչի բոլոր ծախսերը (ուտելեաց հայլն) իւր դոնից հոգում է առաջնորդական դրտողը «ով որ կըհամարձակի մեր ընկերութեան համար լրագրում գրելու նորա գլուխը կըջարդենք» և այլն այսպիսի երազներ և թայֆայականներին յատուկ երևայական տուր ու դմփոցների ձայն էր որ լսում էր յիշեալ պարոնը. ահա ձեզ ինտելիգէնտ (?!!) կոչուած երիտասարդի տրամաբանօրէն ասուած խօսքերը: Իսկապէս տխուր իրականութիւն է մեզ համար որ ներկայ 19-երրորդ դարու մէջ դեռ ևս գոյութիւն ունի Հնադարեան կոպիտ, թշնամական ոգին, որը պատճառ եղաւ հանրամարդկային բարոյական աւերման:

Տեղոյս երիտասարդների անտարբերութիւնը դէպի լուսաւորութիւնը, դէպ՝ յառաջադիմութիւնը դէպ՝ մամուլը իրօք զզուելի է. լուսաւորութիւն յառաջադիմութիւն չեն սիրում, որովհետև դոքա վնասակար են միայն նորանց շահերին, իսկ, մամուլին՝ որովհետև նրանց կեղտերն է երևան հանում և մտրակում է որպէսզի արթնանան. իսկ կուսակցութիւնից «զահլաներն» է գնում, որովհետև կուսակցութեան բարոյական նշանակութիւնը հասկանալու ընդունակութիւնից զուրկ են, նրանք չեն հասկացել որ ճշմարիտ կուսակցութիւնն է մարդկութեան դէպի յառաջադիմութիւն մղողը. նորանք չեն ուզում ձրգտել դէպի ինչ որ ազնիւ է ինչ որ բարի, բայց գիտեն միայն մեծամանց հետ տմարդի կերպով վարուել մի ընդհանուր թշնամական ատելութեամբ. ահա թէ որչափ սահմանափակ է Դավրէժու երիտասարդութեան մեծամասնութեան մտքի և տրամաբանութեան հորիզոնը, որը պարփակուած է շնորհիւ խաւարամիտ, միջնադարեան գաղափարների պրոպագանդայի. բայց և խաւարամտութեան դարն էլ անցաւ, այժմ 19-երրորդ դարն է, դար մարդկութեան յառաջադիմութեան և լուսաւորութեան:

Խնդրում ենք յարգելի խմբագրութեանդ, որ «Շաւղի» միջոցաւ զանց չառնի երբեմն մտրակել տեղոյս բարոյականի և գաղափարականի կողմից վնասուած երիտասարդութեան:

Յովել Տէր Մովսէսեանց.

ծակալ Տէր-Եղիայ քահանան: Յիշեալ քահանայի ամենամեծ հոգսերից մէկն է ուսումնարանի հիմնադրութիւնը, որը և խոստանում է հակառակ դէպքում իւր անձնականից վճարել ուսուցչի 40 թուման *) տարեկան վարձը միշտ պահելով նաև նրան իւր տնում:

Անցեալ աշնանը ուսուցիչը և յիշեալ գործակալ քահանան դիմում են Նոր-Ջուղա Եսայի Սրբազանին. նա ևս աջակցում եւ մի մասնաւոր կոնդակով ուսուցիչը վերադառնում է Քեազազ, բայց Տէր Ենովք քահանան իրան աջակից ունենալով Քեալավա գիւղի սեազլուխ քահանաներից մէկին, զգոռում է գիւղացիներին ուսումնարանի դէմ:

*) Մենք գիտենք, որ երեք տարի առաջ երբ Ե. Վ. Թագաւորը անցնելիս Ուրդից: Քեազազի գաւառականները, այնտեղի կուսակալ Հաքիմ-էլ-Մամալէքի միջոցաւ դիմելով Ն. Վեհափառութեան, նա բարեհաճել էր այդ մասին երկու հարիւր թուման նուիրել և կուսակալն էլ խոստացել էր արդէն դպրոցը կառուցանել, հապա ինչ եղաւ:

Ծան. Խմբ.

Այդ առթիւ Սուլթանաբաղից Աղնա է գալիս «Զիկլէր» անգլիական վաճառատան գործակատարներից պ. Մուշեղ Շահբազեան եռանդուն երիտասարդը և միանալով գործակալ տէր Եղիայի և ուսուցիչ պ. Արմենակի հետ, ժողով գումարում և ընտրում է գիւղացիներից 7 անձեր հոգաբարձու, գործը սկսում է քիչ շատ կարգի ընկնել. բայց բարեսիրտ Տէր Ենովք քահանան կրկին սկսում է իւր գործունէութիւնը, ինկնում է ժողովրդի մէջ զգոնում և գործը մնում խարխուն դրութեան մէջ: Մենք անձամբ ներկայանում ենք այդ անարժան քահանային, յորդորում ենք որ անձնական հաշիւները ոչ մի կապակցութիւն չունին ուսումնարանի հետ և այլն. բայց նա, միշտ միևնոյն յամառը, պատասխանում է որ անկարելի է. ինչ որ անեն կը քանդեմ, եթէ թոռներիս պահպանութեան թոյլ տուութիւն չըլինի և այլն...:

Այդտեղ ևս չորս օր մի հայ գիւղացու տընում մնալուց յետոյ ուղևորուեցանք 15 բոպէ հեռաւորութեան վրայ գտնուող Տելիսավա գիւղը. յիշեալ գիւղը 200-ի չափ բնակիչներ ունի որոնցից 40 տուն հայեր էն գրանք էլ ունին երկու քահանաներ: Մեր ուղեցոյցի առաջնորդութեամբ գնալով Տէր Յովհաննէսի տուն ականատես եղան մեք կախարդութեան. Տէր հայրը իրը կախարդ և թուղթ բացող մեծ համբաւ ստացած լինելով այդ գաւառում. նրա մօտ եկել էր մի թուրք, որի կինը զաւակ չէր ծնում եղել, որի համար Տէր հայրը մեր ներկայութեանը գրեց մի փառաւոր թուղթ և ստացաւ մի դրան: Աղնա գիւղում գտնուող ուսումնարանի քայքայման հերոսներից մէկն էլ այդ քահանան է, նա՝ գիւղացի մանուկի դուսում ստանալը վնասակար է համարում:

Յիշեալ գիւղացիք թէև պարսիկների հետ խառն են ապրում բայց նիւթապէս նախանձելի մի վիճակ ունին, այնտեղ էլ կարելի է տեսնել քահանայի 12 տարեկան որդին էլ ամուսնացած 7 տարեկան աղջկայ հետ:

Այդ գիւղից ևս 1 ու կէս ժամ հանգստանալուց յետոյ տխուր տպաւորութիւնների տակ հեռացանք և գնացինք Աբասաբադ գիւղը, դա 40—50 տուներից է բաղկացած և ունի մի քահանայ գիւղացիք լաւ են ապրում...:

Ն.

իւր փայտի փոխադարձ հարուածով վերք է պատճառում մէկ զինուորի աչ այտի վերայ։ Շիտոթիւթիւնը սաստիկ էր, խուժանը անդիմադրելի։ Եւրոպացիները փախչում են Գէպի փղրցադրշնց հետապնդումէ ապելիկատաղածդինուորութիւնը պայ անգամ մերկացրած սրերով։ Գազի դիրիկտեորը այդ խառնակութեան մէջ թէ ուր է փախչում իւր շան հետ յայտնի չէ, միայն կատաղի հոսանքի առաջ մնում են Շարժէ-դաֆֆէրը և բժիշկը, բժիշկը երկու սրերի հարուած էլ ընդունում է գլխին, իսկ միւսը հեծում փայտի սաստիկ հարուածներից ներքոյ։ Գուցէ նրանք մէկ տարի վախճան կ'ունենային, եթէ զինվորատը խլուած չը լինէր խմբագրութեանս մարդիկներից և բժիշկը պ. Բառնաուդի խանութի մէջ (որը գտնվում է խմբագրատանս դէմ յանդիման) եղող տիկիններից և պատսպարուած չը լինէին ներսում։ Այդ երկու տները յարձակեցան կրելու վախի մէջ էին եթէ զինուածով (բարեբաղդաբար) պատերազմ. նախարարի երկրորդը, Սարդար Վ.աքիլը-Դովլէն յանկարծ արծուի նման վերայ հասած չը լինէր։ ամբոխը ցրուեցին և սկսուեցաւ քննութիւնը։ Բժիշկը արդէն տրեան մէջ լողում էր բայց չէր կորցրել իւր կորովը, իսկ միւսը որ մէկ շատ թեթև վերք (քերթուած) էր ստացել ճակատի վերայ, վախից բոլորովին այլայլուած, ամբողջ մարմնով դողդողալով լեզուն անգամ կապուել էր։ Բժիշկներ շուտով հասնելով կարտեցին, կարեցին ակնաբոյժի վերքերը և կապեցին գլուխը, խորհուրդ տալով որ չը շարժուի անկողնից։ Որովհետև խնդիրը ծանրակշիռ էր իսկոյն ձերբակալուեցան և բանտարկուեցան խռովարար զինուորներն ու նրանց պետերը և հեռագրուեցաւ եղելութիւնը պատերազմ. նախարար Սրքայազն իշխան Նայիբ Սալթանին, խնդրելով տնօրինութիւն, որը պատասխանել էր սպասել իւր գալստեան։ Միւս առաւօտ (չորեքշաբթի) ժամը 10-ին առաւօտեան, Ն. Կ. Մեծութիւն Սրքայազն իշխանը բարեհաճեց ամառանոցից վերադառնալ և հէնց հրապարակում կառքից իջնելով, ոտքի վրայ կանգնած հարցու փորձ արեց ամ կանատես վկաներին, (որից յետոյ ներկայացաւ Շարժէ-դ'Ամֆֆէրը). քննեց գործը և պատիժները որոշեց, որոնք պէտք է գործադրուէին իւր պալատում, ի նեղկայութեան Շարժէ դ'Ամֆֆէրի։ Բազմութիւնը անհամար էր։ Ն. Կ. Մեծութիւնը կառքը հեծնելով ուղևորուեց դէպի պալատ, որին հետևեցին ամբողջ թնդանօթաձիգ զօրքը, մէջտեղ առած դիմայական յանցաւորներին և եւրոպացիք։ Յանցաւորները ենթարկուեցան քնութի (թագիանայ) հարուածների և դատապարտուեցան բանտարկութեան։ Պատիժը խիստ էր։ Սմեն ոք շնորհալ լինելով հեռացաւ։ Սհա թէ ինչպէս ամենապրակտիկական և գեղեցիկ փստեմն է, ինչ կառավարութիւնը գործ դնում յանցաւորների նկատմամբ թէկուզ ովքեր էլ լինէին նոքա։ Բացառութիւն չըկայ։

Ստացանք Դավրէժում Հայոց կրթական Սէր ընկերութեան Հրատարակած Խանզադէի անգղիերէնից թարգմանած «Մրցող պատգամաւորները» «Հայրական սէր» «Նախապաշարմունք» կոտրները 'ի մի գրքոյկ ամփոփուած։

—

Մայրաքաղաքումս սպասում և շուտով կը ժամանէ Ն. Վ. Սուլթանի արտաքոյ կարգի դեսպանութիւնը Պարսից Դրան մօտ, բերելով և թանկագին ընծաներ։

—

Ամանցանք Դավրէժու Լիլավա թաղի Հայուհեաց բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը վաւերացեալ թեմական առաջնորդից։ Նպատակը շատ գեղեցիկ և ծրագիրը շատ ընդարձակ է։ Հազիւ թէ պարսկահայոց պատմութեան մէջ, երկար դարերից 'է վեր, կարելի է արձանագրել որ վերջապէս պարսկահայ կինը մէկ հասարակական գործի ձեռք է զարկել։ Ի սրտէ յաջողութիւն ենք մաղթում և յորդորում մեր, առանց էն էլ անտարբեր հասարակութեան մանաւանդ տիկնանց, որ ամէն կերպ ձեռնտուութիւն և օժանդակութիւն անեն այդ բարենպատակ հիմնարկութեան։ Միայն ըստ մեզ կանոնադրութեան մէկքանի կէտերը որպէս մտածում ենք, յաւիտեանս յաւիտենից անգոլծադրելի պիտի մնան։ Օրինակ. ընկերութիւնը պիտի օգնէ աղքատ ընտանիքների և թէ բոլոր Պարսկաստանում օրիորդ. դպրոցներ պիտի բանայ և կամ եղածներին պիտի օժանդակէ և այլն։ Պիտի ասեն թէ կանեն երբ կը կարոնան, իսկ մենք կաւելացնենք թէ նրբանց, ժամանակին արած այդ օժանդակութիւններն էլ կարող են նմանել Հայրիկի արած օգնութեանը. 7500 հրկիզելոց 1500 ռուբլով օգնելը։

—

Ռաշտից մեզ գրում են այստեղի հոգաբարձուներից մէկը, պ. Յորդանանեանը շատ է բարկացել «Շաւիղի» գլխաւոր աշխատակցի դէմ, ուզում է անպատճառ ծեծել նորան, բանից դուրս է գալիս որ այդ պարոնը, իր շերամից գոյացած բոժոժները, հրացանի գնտակներ է կարծում, եթէ այդպէս է, ուրեմն խորհուրդ ենք տալիս Ռաշտեցիներին էլ վախենալ այդ պարոնից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

Թիֆլիզ. 20 յունիս 95

Սկսում են քաղաքս լցել գաւառական ուսուցիչները, որոնք ոչ թէ զարճանալու, մի քիչ զբօսնելու են գալիս որպէսզի դասերը սկսելու համար կազդուրուին, այլ ընդհակառակն ամառայ այս մի քանի ամսայ ընթացքում աւելի տանջվելու և զբաղուելու։ Դրա պատճառը այն անպիտան սիստեմն է, որ դեռ չէ վերացել Կովկասի դպրոցներից։ Ուսուցիչների փոփոխել, մէկ տեղից մէկ տեղ փոխադրել և կամ ուսումնական տարեշրջանը լրանալիս յետագայ տարայ համար ուսուցչին ոչինչ չը յայտնելը՝ դառել է մի ախտ, որ ոչ միայն ուսուցիչներին տանջում է, այլ և մեծ վնասներ է հասցնում կրթական գործին։ Ոչ մի ուսուցիչ, երբ մի տեղ գալիս, չը գիտէ թէ յետագայ տարին էլ մնալու է այնտեղ թէ ոչ։ Թափառական հրէաների պէս նրանք մի տեղ հանգիստ նստելու վիճակած չեն, իսկ դպրոցները այդպիսով, ենթարկուած զանազան ուսուցիչների զանազան դասաւանդութեան ձևերի, բնական կը լինէր եթէ լաւ արդիւնք չը տային։ Այսօր գալիս է մի ուսուցիչ—տալիս է պահպանողական տիրացուական ուղղութիւն, վաղը գալիս է երկրորդը, ջնջում է առաջինի արածը, սերմանումէ նորը և դեռ ապահով չեղած որ այդ սերմերը կարող են արմատներ ձգել—հեռացվում է կամ հեռանում։ Եւ այսպէս ամէն տարի մի նոր ուղղութիւն, մի նոր ձև, աշակերտներին վարժեցնում է ոչ մի ուղղութիւն չունենալ, փոփոխամիտ դառնալ, թաց ճիւղի նման ծռուել այն կողմը, որ կողմը նրան կը հրէ մի ուժգին քամի։

Ի՞նչ է լինում ինքը ուսուցիչը. նրա մէջ եթէ սկզբում աշխոյժ լինում է, մեռնում է, որովհետև չեն թողնում իր աշխատութեան, իր ջանքերի և տքնութեան արդիւնքը տեսնելու, չեն թողնում նրա վրայ հանգիստ սիրտ։ Տարայ ընթացքում նա դեռ ազատ չէ զանազան ազաների, զանազան սեազլխի կամ տէրտէրի քմահաճոյքներից ու ցանցառ դիտողութիւններից—այդ բաւական չէ, բաւական չէ նաև նրա կրած նեղութիւնը նիւթական կողմից, հազիւ թէ նա սկսում է տեղաւորուել, ինքն իրեն ժողովել, միտքը կենդրոնացնել և գործի սկսել, կազմում է պլաններ, սկսում է ճանաչել իրեն յանձնուած աշակերտներին, ծանօթանալ նրանց արտաքին պայմանների հետ... մի խօսքով հազիւ սկսում է իր գործի հետ ծանօթանալ, որ ահա տարին լրացաւ։ Գալիս են արձակուրդները, վարժապետը այժմ չը գիտէ իր ապագայի մասին ոչինչ, նրան չեն էլ յայտնում թէ պիտի պահեն այլ ևս թէ ոչ և կամ թէ ասում են «գնա»... նա, շալակում է իր գոյքը, առնում կինն ու զաւակները, գլուխը հանգչեցնելու մի տեղ է փընտռում և ամառայ 3 ամիսները փոխանակ իր խանգարուած առողջութեան զոհելու, այս—այն կողմն է վազում որպէսզի յետագայ ձմռան քաղցած չը մնայ իր ընտանիքը։ Ի՞նչ կեանք է այս, ինչ ուսուցչութիւն. կարելի է այսքան տանջանք երևակայել։

Եւ ահա լցվում է Թիֆլիզ ուսուցիչներով, որոնք պաշտօն են փնտռում դիմումներ անում այս այն կողմ, մի բաց պաշտօնի վրայ տասնեակներով թափւում, միմիանց վնասում, յաճախ միմիանց վատաբանում, ամիսներով սպասում և եթէ մի չնչին տեղ ձեռք բերին, բաղդաւոր են համարում իրենց. ուսուցչութիւնը այդպիսով Կովկասում դառնում է ոչ թէ մի ազնիւ ասպարէզ, ուր պէտք էր ներս մտնողները մի կողմ թողնէին հացի մասին մտածելու, այլ դառնում է մի գործ, մի ապրուստի միջոց. ուսուցչից էլ պահանջելու իրաւունք չունին որ խղճմտանքօրէն վարուի և այլն քանի որ յաճախ է պատահում որ շատ ապիկարներ ու անամօթներ, տիրացուներ և ստորաքարշներ աւելի մեծ տեղեր են ստանում շնորհիւ իրենց քծնական, շողոքորթական և «յարմարելու» յատկութեան։ Օրինակներ պակաս չեն նոյն իսկ Էջմիածնի ճեմարանում, Ներսիսեան դպրոցում։ Ի՞նչ գործ ունին Դանագեօզների պէս տիրացուները Էջմիածնի ճեմարանում և բաւական չէ՞ որ, Յարօի պէս ապիկար ուսուցիչներ շարունակեն գեռ Ներսիսեան դպրոցի փողերը վայելել առանց մի նշանաւոր արդիւնք ցոյց տալու։ Այո, շատ ստորաքարշներ շնորհիւ իրենց ճկունութեան և վարմունքի երերունութեան (օրինակը Շուշայ դպրոցի տեսուչ Եզիշէ Մադաթեանը) յաջողվում են չաղ պաշտօններ ձեռք բերել, մինչ լաւ ուսուցիչներ, ազնիւ գործողներ, ստիպուած դնում են 30 ռուբլի ամսականով գործաւոր լինել գործարանում և ցամաք հացով կերակրել իրենց անբաղդ ընտանիքը։

Բայց ես խօսում էի դեռ ուսուցիչների այդպէս յաճախ փոփոխելու մասին։ Եւրոպայում այդպէս չէ. ոչ մի ուսուցիչ (երբ մի անգամ վարձուեց երկար քննուելուց յետոյ) չէ արձակվում դպրոցից 1) եթէ նա ինքը չէ հրաժարվում 2) եթէ մի ակներև, քննութիւնից առաջացած և հաստատուած հրապարակօրէն և հոգ. խորհրդի մէջ՝ պատճառ չը կայ, 3) եթէ ուսումնական խորհուրդը լաւ քննելուց յետոյ չը գտաւ նրան իրը անկարող շարունակելու։ Ապա թէ ոչ, ուսուցչին փոխել հէնց այնպէս, առանց փաստերի և (այդ փաստերը իրեն պիտի յայտնել, լսել նրան, դատել ուղղակի) տանել ու բերել այս այն կողմ—դա ինչի նման է, ինչ արդիւնք կարող է տալ. չէ՞ որ դա իշխանութեան անամօթ գործադրութիւն է թեմական տեսուչների կողմից, որ կատարվում է ամէն տարի։

Թեմական տեսուչներն էլ խօ Աստուած ազատի, այս կաթուղիկոսի օրով մի մի հրէշային տիպարներ են, մէկ մէկից վատ, անտանելի և որը գլխաւորն է լրբութեան հասնելու չափ յաւակնոտ. Մի մի տիրացուներ են և որովհետև շնորհիւ Հայրիկի յայտնի «բարեսրտութեան» առանց արժանիք ունենալու այդպիսի մեծ պաշտօնի գլուխ են անցել, ի գործ են դնում չը լսուած անպիտանութիւններ և ուսուցիչների հետ վարվում են որպէս ծառաների հետ։ Ասում են որ Թիֆլիսի թեմական տեսուչը բացառութիւն է. դժուար, չէ՞ որ նա էլ մի քահանայ է, ուսումնական ոչ մի բարձր ցենզ չունեցող քահանայ։ Եթէ ես սխալվում եմ—զարմանալի կը լիներ. Հայր Մելեանի գոյնը վաղուց է որ անորոշ կերպարանք է նստացել. այն օրից երբ վերաբկուն պարուրեց նրա հոգին։

Այսպէս ուրեմն կրթական գործը որպէս բոլոր միւս թեմական գործերը Կովկասում՝ սարսափելի դրութեան մէջ

են։ Ներսիսեան դպրոցի տեսուչ ընտրուեց Լեւոն Սարգսեանը։ Ասում են որ թեմական առաջնորդը մերժել է Հոգաբարձութեան այդ ընտրութեանը մասնակցել, այն հիման վրայ որ Լեւոն Սարգսեանը Շուշայ դպրոցում չը լսեց կաթուղիկոսի հրամանը եւ այլն եւ այլն։ Մեր կարծիքով—ոչ միայն կարծիքով, այլեւ պնդում ենք, որ հոգաբարձութիւնը պիտի պնդի իր ընտրութեան վրայ եւ կամ հրաժարուի, որովհետեւ եթէ կաթուղիկոսի կամայականութիւնն է լինելու այդ գործում գերակշռողը, էլ ինչացու են հոգաբարձուները եւ ինչու նրանց գոյութիւնը։

Վ. Փ.

ՄԸՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Խօսքերս «Կանանչան»։ «Արձագանք» լրագրի թղթակից Հախումեանը փառաւոր ընդունելութիւն է գտել Կ. Պոլսում։ Այդ ընդունելութեան պատմութիւնն է, որ անում է նա, յայտնի բան է չը մոռանալով բանաստեղծութիւնը, օրինակ իր ֆրանսերէն խօսելը (մինչեւ չը դիտէ այդ լեզուն) ոստիկանութեան նախարարի հետ, իր ասելը թէ ինքը շատ բան է գրել թիւրքաց դէմ, իր ստորագրութեամբ, օրը ցերեկով (ոչինչ էլ չէ գրել) և այլն եւ այլն։ Բայց գլխաւոր և ճշտագրքիր կէտերը երկու են այդ առաջին մեծ թղթակցութեան մէջ։ Առաջինը որ թղթակիցը ոստիկանութեան նախարարին գտնում է որպէս «մարդ և ընդունակ յուզելու» մի անձ, մինչ այդ միևնոյն նախարարի բոլոր անցեալը հակառակն է պնդում և երկրորդ, որ թղթակցութեան տակը ստորագրում է։ Ուրեմն կամ պ. Հախումեանը մի երկու թղթակցութիւնից յետոյ վռնտուելու է Կ. Պոլսից և կամ աշխատելու է ոստիկանութեան նախարարի պէս շատ ուրիշների էլ յայտարարել որպէս «մարդ և ընդունակ յուզելու և գգալու»...

*** Քանի դեռ «Արձագանքից» չեմ հեռացել, մի քանի խօսք էլ Թէհրանի մի թղթակցութեան մասին, որ ստորագրած է Ս. Գ...եանց։ Վերջապէս մի ճշմարտախօս թղթակցութիւն տալեց «Արձագանքում». այդ յօդուածը նկարագրում է Բաֆֆի ընկերութեան rage-ը ընթերցասէրներ բանալու 30—40 անչան դրքերով։ Առ հասարակ յաւ թղթակցութիւն է, երևում է «Արձագանքը» չէ էլ նկատում որ միմիանց հակասող թղթակցութիւնների ասպարէզ է եղել։ Երևակայում եմ թէ Բաֆֆի ընկերութեան «գեներալ» տնօրէնը և ընթերցասիրաց գրադարանի գրքեր ծախող և ուտող «ամենաղնիւ» գանձապահը որպիսի կատաղութեան մէջ կը լինեն, որ իրանց ապօֆէօզ անող թերթը յանկարծ իրենց գործունէութեան վրայ ստեր ձգեց։ Վայը եկել է քեզ տարել «Արձագանք», այսուհետև թղթակցութեան մի կարկատ է թափելու է վրադ։ Հիմ նախանձում քեզ. ինչ պիտի քաշես մինչև այդ զանազան այլանդակ գրածքները կարդաս։

*** Վերջերս հայ հնախօս պ. Ա. Երիցեանը, միմիանց ետևից բաց թողեց երկու հատոր մի գրածք «Ամենայն հայոց կաթուղիկոսութեան» պատմութիւնը վերնագրով. լրագիրները բաւական խօսեցին պատմական այդ ընտիր աշխատութեան վրայ, «Մշակն» էլ մի երկար յօդուած նուիրեց նրան բայց դեռ ես չէ եղել այն գլխաւոր բանը որ հարկաւոր էր. այն է համեմատութիւններ անել Յովհաննէս Կարպեցու ժամանակուայ հայոց կրօնաւորութեան և այժմեանի մէջ։ Այդ փորձը անել խոստացած է «Շաւղին» մի ձեռնհաս անձի կողմից։ Բայց այստեղ մենք ուզում ենք ակնարկել «Նոր-Դարի» № 113-ի առաջնորդողին, որի մէջ տափակ կերպով ասուած է թէ Մակար կաթուղիկոսի յայտնի կառավարութեան օրերից է, որ խաւարի բանակը (այսինքն մշակականները) կարողացաւ կղերական ոգի մտցնել մեր հոգևորականութեան մէջ, այդ կղերական ոգին վարակեց մեր հոգևորականութեան մի մասը (միւս լաւ մասը անշուշտ Կիւրեղներն են և Բէնիկները)։ Այսուհետև «Նոր-Դարը» սկսում է կղերական ոգու դէմ իր Փիլիպպիկանները» կամենալով ցոյց տալ որ հայ կրօնաւորութեան մի մասն է միայն, որ կղերական ոգով է վարակուել, այն էլ չնորհիւ «Մշակի» և իր կուսակցութեան....

Մի կողմ թողնենք առ այժմ այն խնդիրը թէ, որ կուսակցութեան չնորհիւն է որ կղերական ոգին զօրեղացել է (և ոչ թէ նոր սկսել) մեր մէջ, մի կողմ թողնենք, որ նրա զօրեղացման նպաստող ուղղութիւնը ոչ թէ նրա դէմ բողոքող ուղղութիւնը կարող է լի նել (որպէս է «Մշակինը») այլ միմիայն նրան պաշտպանողը (որպէս եղել է և է «Նոր-Դարինը») մի կողմ թողնենք այդ և կանգ առնենք նրա վրայ, պահպանողական—կրօնական թերթն իսկ «խոստովանվում է», որ հայ կրօնաւորութեան մէջ «մտել է կղերական ոգին». չնորհիւ նաև վատ կրօնաւորների, սկսած մաքուր կաթուղիկոսի օրով։ Եթէ վատ կրօնաւորութիւնն է կղերական ոգու մտցնողը (որպէս տրամաբանում է «Նոր-Դարը») ապա ուրեմն նա չը պիտի ուրանայ թէ Մովսէս խորենացու ժամանակից սկսած ապիկար, մոլի, պորտաբոյծ կրօնաւորները մեծամասնութիւն են կազմել հայոց հոգևորականութեան մէջ, որ Յովհաննէս Կարպեցուց սկսած մինչև այժմ բացառութեամբ Ներսէս կաթուղիկոսի, և քիչ էլ Գէորգի, հայ հոգևորականութիւնը քանի գնում փչանում է, քանի գնում այլասերվում է և իր դասակարգային—կղերական ոգու շահերին իոկ մնտսում։ Այսպիսով նոր կաթուղիկոսը, որպէս հայ կրօնաւորութեան իդէալական տիպ, իր ներկայ գործերով, ժողովրդի առջև լիովին կոտրեց հայ կրօնաւորութեան յարգը, շրջապատելով իրեն ամենանշնորը տրեղաներով և վարդապետներով և ազգային գործերը ձեռքում որպէս խաղալիք գործածելով։ Նոր Կաթուղիկոսի ձգտումն է իր դպաթնակէտին, իր նախկին հիերարխիական բարձրութեան հասցնել հայ հոգևորականութեան, ամիրայական կամայականութեան խաղալիք անել ազգն ու նրա գործերը և «Հայրիկից» բարձր ոչ ոքի չընդունել։ Ի՞նչ որ դեռ մեր ականջին են հնչում սոյնպիսի հոսսական խօսքեր, «Հայրիկը իսրհուրդի պէտք չունի, ան դիտէ իր ընելիքը, ոչ ոք կրնայ անոր բան սովորցնել»... այս խօսքերը կաթուղիկոսից փոխ առած. աւելի փոքր վարչական գործերում կրկնում են նրա այն բոլոր եպիսկոպոսներն ու աբեղաները. որոնք օրը ցերեկով էլ անկարգութիւն չը մնայ, էլ ամիրայութիւն չը մնայ որ չը գործէին։

Եւ դեռ «Նոր-Դարը» համարձակվում է բացառութիւն համարել վատ կրօնաւորը հայ հոգևորականութեան մէջ։ Ովքեր են լաւերը. Կիւրեղը որ մեռաւ, թէ Յուսիկ I-ը կամ II-ը և կամ Բէնիկն ու Զախեանցները... Զանազան մութ անկիւններից, տխուր անցեալով ու տիրացական ոգով այդ կրօնաւորներն են լաւերը, թէ նրանք, որոնցից մէկը հալածելով մեռաւ, միւսին անգործունէութեան դատապարտելով ուզում են ժանգոտեցնել, երրորդին—համալսարանական մի աշխոյժ և գործունեայ անձի որպիսին Խորէն եպիսկոպոսն է—ուղարկում են հեռաւոր վանքի մէջ մեռնելու...

Ժանգոտ մարդը—Սպանդար Սպանդարեանը—սկսել է առաջնորդողներ գրել և այդ գրածներից բուրող ժահահոտութիւնը ճանաչեցնում է այն ուղեղի դրութիւնը, որից արտավիժվում են այդպիսի երեխայական տրամաբանութիւններ և այլ այնպիսի հայեացքներ, ոչ-ոնք իրենց հնութեամբը միջին դարից անցամ անցել են...

Վ. Ֆ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԵՑՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Ս. Պետերբուրգ. 1 օգոստոս. Կիսապաշտօնապէս յայտարարվում է որ Ռուսաստանը բարեկամական զգացմունքներ է տածում դէպի բուլգարական ժողովուրդը, բայց երբ և իցէ յարաբերութիւնների մէջ չը պիտի մտնէ Ֆերդինանտ իշխանի հետ, որի վարած պաշտօնը նա իրաւացի չէ համարում՝ այս յայտարարութիւնը վերջ է դնում այն կարծիքին թէ երկու երկիրներ ուզում են նորից բարեկամանալ։

Սոֆիա. 3 օգոստոս. Մի քանի մարդասպաններ յարձակեցան Մատաքիէվի վրայ, որը հանդուցեալ Սպանբուլովի բարեկամն էր և մահացու կերպով վիրաւորեցին նրան։

Կ. Պոլիս. 3 օգոստոս. Բ. Դրան պատասխանը, որ տրուած է դեսպաններին Հայկական հարցի վերաբերութեամբ անբաւարարացուցիչ է գտնուած։ Դա աւելի մի քննադատութիւն է պետութիւնների ներկայացրած բարենորոգումների ծրագրին։

Սոֆիա. 4 օգոստոս. Բուլգարական դեսպանութիւնը Ս. Պետերբուրգից վերադարձել է և մեծ ոգևորութեամբ է ընդունուել այստեղ։ Մետրոպոլիտ Կլէմէնտ դեսպանութեան գլուխը մի ատենաբանութիւն է արած ժողովրդի աւելի բացատրելով ռուսական և բուլգարական շահերի նոյնութիւնը։

Լոնդոն. 4 օգոստոս. Սըր Ֆիլիպ Քըրրին Պոլսոյ անգլիական դեսպանը հրահանգ է ստացել պահանջելու այն հայ բանտարկեալների ազատութիւնը, որոնք դատապարտուած չեն։ Անգլիան միացած Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների հետ լուր է տուած Բ. Դրան անմիջապէս նշանակել մի եւրոպացի կոմիսէր՝ ոուլթանի կողմից կառավարելու հայկական նահանգները։

Լոնդոն. 6 օգոստոս. Գլադստոնը այս երեկոյ մի ճառ խօսեց ի նպաստ Հայկական հարցին Զէստերի մէջ գումարուած ժողովում. նա շատ խիստ լեզու գործածեց Բ. Դրան բռնած ընթացքի դէմ և ասեց որ տաճիկների թէ մերժումները և թէ խոստումները նշանակութիւն չունին և թէ Անգլիան չը պէտք է վախենայ բռնադատում բառից երբ տաճիկների հետ գործ ունի։

Լոնդոն. 7 օգոստոս Անգլիական մամուլը միաձայն հաւանում է Գլադստոնի գործածած լեզուն երեկուայ Զէստերի ժողովում հայկական հարցի մասին։

Լոնդոն. 8 օգոստոս. 4 անգլիական զրահաւորներ այսօր պիտի մեկնեն Ճիպրալտարից ունենալով կնքած հրահանգներ. այնպէս է կարծուում որ նրանք Մարմարայ պիտի երթան։—Իշխան Ֆերդինանդ դեռ բացակայ է Բուլգարիայից, ուր քաղաքական դրութիւնը շատ լուրջ կերպարանք է ստացել այն պատճառով որ ներկայ կառավարութեան պաշտօնավարութեան ժամանակ Բուլգարիայի համար Ռուսաստանի հետ ոչ մի մերձեցման յոյս չը կայ։

Ս. Պետերբուրգ. 8 օգոստոս. Աբիսինեայի դեսպանութիւնը վերադառնում է. դրան ընկերակցում է գնդապետ Լիոնդէվ։

Արտօնատէր—Հրատարակիչ՝

ԱՆԴՐԻԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամսոյս 2-ին Արամեան դպրոցի դահլիճում ի ներկայութեան պատուարժան ազգայնոց տեղի ունեցաւ «Դպրոցական Բարեսիրական» ընկ. վիճակախաղն որից շահեցան հետևեալ տոմսակներն։

Տոմսակի թիւ	164-ը	Շահեցաւ	№ 1	Մատանին արժէք	280	դրան
,,	,,	206-ը	,,	,, 2	,, ,,	220	,,
,,	,,	21-ը	,,	,, 3	,, ,,	190	,,
,,	,,	12-ը	,,	,, 4	Ադամանդեայ բրոշն	160	,,
,,	,,	36-ը	,,	,, 5	Ոսկեայ ժամացոյցը	150	,,

Կը խնդրուի յարգելի տոմսակատէրերից որ հաճենան իրենց տոմսակն ղրկել վարչութեանս և ստանան իւրեանց շահածներն,

Վարչութիւն.